

25-ը մայիսի, 2016թ

ՀՀ Սյունիքի մարզպետ
պարոն Սուրիկ Խաչատրյանին

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի
տեղավորման և կառավարության հետ կապերի ղեկավար
Արթուր Ղազարյանից

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

Ձեզ եմ գրում «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի անունից, որի
առաքելությունն է հավաքագրել և վերապատրաստել հարուստ ձեռքբերումներով
երիտասարդ մասնագետների, ովքեր, երկու տարի դպրոցներում դասավանդելով,
կընդլայնեն բոլոր երեխաների կրթական հնարավորությունները:

«Դասավանդի՛ր, Հայաստան» ԿՀ-ն իր կողմից հավաքագրված և վերապատրաստում
անցած ուսուցիչներին գործընկերության սկզբունքով տեղավորում է ՀՀ մարզային
այն դպրոցներում, որտեղ նրանց կարիքը կա: Ուսուցիչներն այդ դպրոցում
պարտավորվում են աշխատել երկու տարի ժամկետով, որից հետո հիմնադրամը
պատրաստ է նոր մասնագետ գործուղել տվյալ դպրոց, եթե դեռ կարիքը լինի:

Հիմնադրամի առաջիկա ռազմավարությունը հնարավորինս ճշգրիտ կազմելու
համար, մենք Ձեր աջակցության կարիքն ունենք. Ցանկանում ենք հստակ
պատկերացում կազմել, թե Ձեր մարզում ի՞նչ մասնագիտության ու քանի՞ ուսուցիչ
կարիք կա տարեկան կտրվածքով:

Շնորհակալ կլինենք, եթե Ձեր պատասխաններն ստանանք մեկ շաբաթվա
ընթացքում:

- Քանի՞ թափուր հաստիք է լինում մարզում տարվա կտրվածքով
- Քանի՞ թափուր հաստիք է լրացվում ոչ մասնագետներով՝ համապատասխան մասնագետ չլինելու պատճառով
- Քանի՞ թափուր հաստիք է մնում ազատ
- Որո՞նք են այն հիմնական մասնագետները, ում կարիքը կա մարզում
- Հնարավո՞ր է արդյոք ամեն տարի 35-50 ուսուցիչ տեղավորել Ձեր մարզում /երկու տարի ժամկետով/

Կանխավ շնորհակալություն:

Համագործակցության ակնկալիքով՝



Արթուր Նալչանյան



Տեղավորման և կառավարության հետ կապերի ղեկավար,

«Դասավանդի՛ր, Հայաստան» ԿՀ

artur@teachforarmenia.org, 077772505

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցներում առկա թափուր հաստիքների մասին

Թափուր հաստիքների թիվը տարվա ընթացքում	Ոչ մասնագետներով լրացվող թափուր հաստիքների թիվը	Ազատ մնացած թափուր հաստիքների թիվը	Թափուր հաստիքները՝ ըստ մասնագիտությունների	Երկու տարի ժամկետով անհրաժեշտ մասնագետների թիվը
89	0	42	Ֆիզկուլտուրա-9 Ֆիզիկա-8 աշխարհագրություն-5 ինֆորմատիկա-6 պատմություն-4 ռուսաց լեզու-3 անգլերեն-3 մաթեմատիկա-3 գերմաներեն-2	36